


019
4-21

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ
ՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

ПОЛОЖЕНИЕ

о

ветеринарном участке



ԹԵՏՐԱՎԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՈԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ - 1929

30 JUL 2010

17 MAY 2013
85 04

619
4-21 *m*

ԿԱՆՈՆԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱԱՍԽԱԲՈՒԺԱԿԱՆ
ՏԵԶԱՆՔ ՄԱՍԻՆ

641

ПОЛОЖЕНИЕ
о

ветеринарном участке

14214-157

—



ԿՈՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԸՆԸԲՑՈՒԺԱԿԱՆ ՅԹԶԱՆԻ ՄՅՈՒՆ

(Հրատարակվում ե Անասնաբուժական կանոնագրքի IV-րդ մասի
հիման վրա)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ. ՀԱՍՏԻՔ ՅԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐ

1. Համաճարակների դիմ պայքարելու ձեռնարկումներ և տվյալ վայրում անասնաբուժական հսկողություն կիրառելու նպատակով՝ ինչպես նաև բնակչությանն ամեն տեսակի անասնաբուժական ոգնությամբ ապահովելու համար հիմնվում ե անասնաբուժա-շրջանային կազմակերպություն—անասնաբուժական օրգան:

2. Անասնաբուժական շրջանը հանդիսանում ե անասնաբուժական սկզբնական կազմակերպչական բջիջ, նվազագույն հաստիքով, վորը բաղկացած ե շրջանի վարիչից-շրջանային անասնաբուժից, անասնաբուժական և անասնաբուժական սանիտարից:

3. Անասնաբուժական շրջանային կազմակերպության անելիքներն են.

ա) ուսումնասիրել շրջանի անասնաբուժա-սանիտարական դրությունը, անասնաբուժա-սա-

Նիտարական նախազգուշական միջոցներ կիրառել կենդանիների հիվանդությունները կանխելու և կենդանիների ու մարդկանց ընդհանուր վարակիչ և պարագիտար հիվանդություններից ժողովրդական առողջությունը պահպանելու համար.

բ) պարագարել կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ.

գ) ամեն տեսակի բուժական ոգնություն հասցնել հիվանդացած անասուններին.

դ) սպասարկել զյուղատնտեսության սոցիալիստական հաստածին.

ե) կատարել անասնաբուժական լուսավորական աշխատանք.

զ) մասնակցել անասնապահության վերականգնման և հետագա զարգացման համար կիրարկվող զոռտեխնիկական ձեռնարկումներին.

ը) մասնակցել տեղական խորհրդային, արհեստական և հասարակական կազմակերպությունների ձեռնարկումներին.

թ) մասնակցել կենդանիների ապահովագրությանը (այս կանոնադրության 34, 35, 36, 37 և 38 հոդվածների հիման վրա),

II. ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

4. Անասնաբուժական շրջանը վարչատնտեսական տեսակետից գտնվում և շրջանային դուրստիք կոմիտեի անմիջական իրավասության տակ, իսկ անասնաբուժական բոլոր ձեռնարկումների

կիրարկման ասպարիզում անասնաբուժական շրջանը յենթարկվում և անմիջականորեն շրջանային անասնաբուժին, գավառական անասնաբուժական յենթաբաժնին և Հողագործության ժողովրդական կոմիտեի կատարական վարչությանը:

5. Անասնաբուժական շրջանի տարածությունը սահմանում և Հողագործության ժողովրդական կոմիտեի կատարական համապատասխան գավառային անասնաբուժական մարմինների առաջարդությամբ (Անասնաբուժական կանոնագրքի 77 հոդ.), նկատի ունենալով զյուղատնտեսական կենդանիների թիվը և խտությունը, կենդանաբուծության բնույթը և թեքումը, կենդանիների մշտական կամ ժամանակավոր համախմբումը, անասնաբուժական նշանակություն ունեցող հիմնարկությունների ու զբաղմունքների գոյությունը և հաշվի առնելով տերթորիալի անասնաբուժական ապահովությունը, սակայն լուրաքանչյուր վարչական շրջանում՝ մեկ անասնաբուժական շրջանից վոչ պակաս:

6. Յուրաքանչյուր տիպային անասնաբուժական շրջան, իբրև մի լրիվ միավոր, պարտավոր և ունենալ սարքավորված՝ ա) բուժարան-տաք մանեժով (լերթեկե հիվանդների համար), գեղատուն, դիագնոստիքական կարինետ, սպասարան, վարչակիչ հիվանդների մեկուսարան, քուի ծծմբագալիքին բժշկության և ձիասարքի արտահանության համար գաղային սենյակ, փոխարքական միջոցներ, հատուկ հագուստ, շըշմանի անասնաբուժական և ոժանդակ պերսոնալի համար բնակարան և բակում կառուցված անհրաժեշտ տնտեսական շինություններ (ջրհոր, մառան, ամբար,

գոմ, ցախատուն, արտաքնոց և ալլն), կամ թ) աճաս-
նաբուժական եթվանդանոց այն սարքավորումներով
և շինություններով, վորոնք պահանջվում են բուժա-
րանի համար և հիվանդ կենդանիների մնայուն բըժշ-
կության համար հատուկ շենքով:

ԾԱՆՈԹ. — Անասնաբուժական շրջանի
շինությունների տիպային հատակագծերը
և սարքավորման նորմաները վորոշվում են
Հողագործության ժողովրդական Կոմիսա-
րիատի հատուկ հրահանգով:

7. Շրջանային անասնաբուժական պերսոնալի
աշխատանքը կատարվում է Աշխ. Որենսգրքի 95-րդ
հոգվածի և թթշկա-սանիտարական ու անասնաբուժա-
կան հիմնարկությունների աշխատանքի ժամերի վե-
րաբերյալ կանոնադրության համաձայն ու կարգա-
վորվում է տվյալ հիմնարկության սահմանված կար-
գով հաստատված ներքին կարգի կանոններով:

ԾԱՆՈԹ. — Շրջանի վարիչ անասնա-
բուժի չնորմավորված աշխատանքի որը վե-
րաբերում է միայն նրա վարչական աշխա-
տանքին: Իսկ բուժական, սանիտարական
հսկողության և այլ աշխատանքների հա-
մար 6-ժամյա բանվորական որ և ստհման-
վում:

8. Անասնաբուժական ոգնությունը շրջանում
ցույց է տրվում ձրիտրար:

III. ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԵՐՍՈՆԱԼԻ ԳՈՐԾՈՒՆԵ-
ՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱ-
ԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՇՐՋԱՆԻ ՎԱՐԴՉ-ՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱՆԱՍՆԱԲՈՒԺ:

9. Շրջանային անասնաբուժը նշանակվում, ար-
ձակվում և տեղափոխվում ե գավառային հողբաժնի
կողմից գավառային անասնաբուժական լենթաբաժնի
առաջարկությունը և Արհմիության համաձայնու-
թյամբ, վորի մասին հայտնվում ե Հողագործության
ժողովրդական Կոմիսարիատի Անասնաբուժական Վար-
չության:

ԾԱՆՈԹ. — Շրջանային անասնաբու-
ժին մի վայրից մի ուրիշ վայր տեղափո-
խելու գեղգերն ու կարգը վորոշվում են
ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1928 թ. հունիսի
23-ի № 422 վորոշման համաձայն:

10. Շրջանային անասնաբուժը հանդիսանում է
վշանի վարիչը և շրջանում անասնաբուժա-սանիտա-
րական նախազգուշական, համաձարակային, բուժա-
կան և կուլտուր-կրթուկան բոլոր ձեռնարկումների
անմիջական պատասխանատու կազմակերպիչն ու կի-
րարկողը, համաձայն Անասնաբուժական Կանոնագըր-
քի և ի զարգացումն նրա Հողագործության ժողովը
դական Կոմիսարիատի կողմից հրատարակվելիք կա-
նոնադրությունների, հրահանգների և կանոնների ու
տեղական պարտադիր վորոշումների:

11. Շրջանային անասնաբուժին վարչական և հա-
տուկ անասնաբուժական տեսակետից անմիջականո-
րեն լենթաբաժնում են շրջանի անասնաբուժակը և ա-

նասնաբուժական սանիտարը, կատարելով նրա բոլոր կարգադրությունները, համաձայն նկրքին կարգի կանոնների (այս կանոնագրության 7 հոդ.):

12. Շրջանային անասնաբուժը պատասխանատու լի շրջանի բոլոր աշխատանքների, իրեն լինթակա պերսոնալին ճիշտ և գորոշված նպատակի համեմատ ոգաագործելու, ինչպես նաև շինությունների, ինվենտարի և անասնաբուժական գույքի ամբողջության համար:

13. Շրջանային գործազիր կոմիտեն և տեղական միլիցիական մարմինները պարտավոր են որինական աջակցություն ցույց տալու անասնաբուժին իր պաշտոնական պարտականությունները կատարելիս, համաձայն Անասնաբուժական կանոնագրքի 84—94 հոդվածների:

14. Կենդանիների և հումանամթերքների տերերի, հումուրյթների պահպանման, վաճառման և մշակման վայրերի տերերի, ինչպես նաև պաշտօնատար անձանց կողմից Անասնաբուժական կանոնագիրքը խափանելու և որևնքով սահմանված անասնաբուժասահմանաբարական պահանջներն ու միջոցները չկիրառելու դեպքում շրջանային անասնաբուժը հայտնում և իշխանության համապատասխան մարմիններին, Անասնաբուժական կանոնագրքի 106—113 հոդվածների համաձայն մեղավորներին պատասխանատվության լինթարկելու համար:

15. Շրջանային անասնաբուժն իր սպասարկած շրջանի տեղական խորհրդային կազմակերպության (շրջգործկոմի) խորհրդատուն և իր շրջանի անասնաբուժական գործունեության բոլոր հարցերի

վերաբերմամբ, ըստ պատկանելույն գեկուցումներե ներկայացնում շրջանի անասնաբուժական գործի գրության և կազմակերպության, արտադրական ծրագըրի ու նախահաշվի մասին, մասնակցում և շրջանային գյուղատնտեսական սեկցիաներին, գյուղատնտեսական խորհուրդներին և զոոտեխնիքական հանձնաժողովներին ու կենդանիների առանովագրության գործին, համաձայն այս կանոնագրության 34, 35, 36, 37 և 38 հոդվածների, կազմակերպում և վարում ե անասնաբուժական կուլտուրթյական աշխատանքը, մասնակցում և տեղական խորհրդային, արենեստակցական և հաստակական կազմակերպությունների ձեռնարկումներին և որենքով նախատեսված գեղագերում տալիս և անասնաբուժական հարցերի վերաբերյալ վկայականներ:

Ա. Անասնա-բուժա-սանիտարական նախագուշական հակողություն լեզ ձեռնարկումներ

16. Շրջանային անասնաբուժը անասնաբուժասահմանաբարական հակողություն և ունենում:

ա) կենդանիների և թոշունների տեղափոխման վրա շրջանի սահմաններում և հումանամթերքների փոխադրության վրա հաղորդակցության՝ սայլի, յերկաթուղային և ջրային ձանապարհներով.

բ) կենդանիների և թոշունների մշտական ու ժամանակավոր կուտակման վայրերի վրա.

շ) հում անասնամթերքների պատրաստման, պահպանման և մշակման տեղերի վրա.

դ) սպանդանոցների և սպանդավալբերի վրա իր շրջանի սահմաններում, վորտեղ հաստիքով հատուկ անասնաբուժական պերսոնալ չի նախատեսնված:

ե) մեկուսացման շենքերի, կենդանիների դիակը հերձելու վայրերի վրա, կենդանիների գերեզմանոցներ շինելու և պատշաճ վիճակում պահելու վրա, կենդանիների դիակների հավաքման վրա և այլն, համաձայն Անասնաբուժական կանոնագրքի 12—74, 84—90 և 94 հոդվածների, Հողագործության ֆողովրդական կոմիսարիատի հատուկ կանոնների ու հրահանգների և աեղական պարտադիր վորոշումների:

զ) հետազոտում և ուսումնասիրում և շրջանն անասնաբուժա-սանիտարական տեսակետից և միջոցներ և ձեռք առնում նրա առողջացման ու բացերի վերացման համար:

ԾԱՆՈԹ.—2. Ազնվացեղ կենդանիների անասնաբուժական հսկողության վրա շրջանային անասնաբուժն առավելագույն ուշադրությունը պիտի դարձնի, յեթե հատուկ մասնագետ չկա:

ԾԱՆՈԹ.—2. Շրջանային անասնաբուժը սպանդանոցների, սպանդավալբերի, մսի հրապարակների, կենդանիների տեսալբրավալբերի, հում անասնամթերքների պատրաստման, պահպանման, վաճառման և մշակման տեղերի հատուկ սպասարկության համար, վորն իր անմիջական պարտականությունների մեջ չի մտնում, ա-

հանձին վարձատրություն և ստանում շահագրգոված հիմնարկությունների և արհմիության համաձայնությամբ վիրոշված և գավառալին հողային բաժնի հաստատած չափով:

ԾԱՆՈԹ.—3. Անասնաբուժա-սանիտարական հսկողության ասպարիզում Առողջապահության ֆողովրդական կոմիսարիատի առողջապահական մարմինների իրավասության հարցերը տեղերում պետք և համաձայնեցվեն վերջինների հետ:

Բ. Պայքար կենգանիների վարակիչ հիվանդությունների գել

17. Շրջանային անասնաբուժը պարտավոր է ժամանակին իր շրջանի սահմաններում, ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները՝ կանինելու, մեկուսացնելու և վերջ տալու տեղական, ազնվացեղ և արդյունաբերական կենդանիների համաձարակային-վարակիչ հիվանդություններին նրանց մշտական և ժամանակավոր վայրերում, համաձայն Անասնաբուժական կանոնագրքի, Հողագործության ֆողովրդական կոմիսարիատի հատուկ կանոնների ու հրահանգների և աեղական պարտադիր վորոշումների: Մարդկանց և կենդանիների ընդհանուր սուր-վարակիչ հիվանդություններ առաջ գալու դեպքում բժշկական և անասնաբուժական պերսոնալի կողմից ձեռք առնվելիք միջոցները կիրարկում են համաձայնեցրած կարգով:

Գ. Բուժական գործունեություն

18. Շրջանային անասնաբուժի պարտականությունն և անասնաբուժական ոգնություն ցույց տալ բուժարան կամ հիվանդանոց բերվող հիվանդ կենդանիներին և թոշուններին ամեն որ, բացի տոն, ազատ և հանգստի որերից:

ԾԱՆՈԹ.—1. Բնակչությանն անասնաբուժական ոգնություն ցույց տալու որերն ու ժամերը, ինչպես նաև շարաթական հանգստի որերը հաստատապես վորոշվում են բուժական հիմնարկի վարիչի և տեղկոմի կամ պրոֆելիագորի համաձայնությամբ և հաստատվում են շրջանային գործադիր կոմիտեյի կողմից, վորոն այդ մասին լայն կերպով իրազեկ և դարձնում շրջանի բնակչությանը:

ԾԱՆՈԹ.—2. Շքեղության և զվարածության առարկա հանդիսացող հիվանդ կենդանիներին և թոշուններին ոգնություն ցույց տալը վոչ վարակիչ հիվանդությունների և տերապեվտիկական նպատակ ու տնտեսական նշանակություն չունեցող ուղերացիաների գեպքում (պոչերը, ականջները կտրելը և այլն) պարտադիր չեն:

19. Բնդունելության ժամերից հետո, ինչպես նաև տոն և հանգստի օրերին անասնաբուժական պերսոնալը ոգնություն ցույց ետալիս միայն այն գեպքերում, իերը անհնարին և սպասել, այն եւ անկանոն ծննդաբերության, աղիքը կամ արգանդը դուրս գալու, խոռոչային վիրափորումների, չդադարող ա-

րյունահոսության, փքուռուցքի (տիմպանիտ) և խիթերի (կոլիկ) ժամանակի Այս աշխատանքը փոխհատուցվում ե աշխատանքի ժամերով:

20. Շրջանային անասնաբուժական պերսոնալի համար տեղերը մեկնելը պարտադիր երողոր համաճարակալին և վարակիչ հիվանդությունների դեպքում, ինչպես նաև այն գեպքերում, յերբ կասկած կա այնպիսի վարակիչ հիվանդության նկատմամբ, վորոնը ըստ շրջանային անասնաբուժի հայեցողության պահանջում և համապատասխան նախագուշական և այլ միջոցներ ձեռք առնել:

21. Շտապ գեպքերում շրջանային անասնաբուժը պարտավոր ե տեղերը մեկնել միայն խոշոր կենդանիներին ոգնելու համար, և 19-րդ հոդվածում մատնանշված հիվանդությունների դեպքում, հիվանդության տեղում բժշկական ոգնություն ցույց տալը պարտադիր ե միայն այն գեպքում, յեթե անասնաբուժին ժամանակին հայտնվում ե, հիվանդությունն առանձին լուրջ բնույթ ունի, հիվանդ կենդանին արժեքավոր ե, և յեթե բուժարանում ընդունելություն կատարող անասնաբուժական պերսոնալի մեկնումը ընդունելության սպասող կենդանիների համար լուրջ վնասներ չի առաջացնում:

ԾԱՆՈԹ.—1. Անասնաբուժական ոգնություն ցույց տալու համար անասնաբուժական պերսոնալը տեղերը մեկնում ե միայն անասնաբուժական շրջանի փոխագրական միջոցներով: Յեթե այդ միջոցներից ոգտվել հարավոր չե, փոխադրական

միջոցը հայթալիքում և շրջանային գործադիր կոմիտեն:

ԾԱՆՈԹ. — 2. Մասը կենդանիները, վորոնց թվում նաև մինչև 6 ամսական հորթերն ու մարուկները (քուռակ) հիվանդանալու դեպքում բուժական ոգնություն ցուց տալու համար պետք և բերվեն անասնաբուժաբան:

22. Յերբ անասնաբուժական աշխատավորի՝ կենդանու հիվանդության վայրը գնալուց հետո պարզվի վոր անասնատերը անասնաբուժական աշխատավորին հրավիրելու համար դիտավորյալ կերպով անձիշտ տեղեկություններ և տվել կենդանու հիվանդության մասին, վորով և անասնաբուժական աշխատավորի մեկնելու պատճառ և դարձել այդ դեպքում շրջանային անասնաբուժական աշխատավորը կենդանուն ոգնություն ցուց տալուց հետո անասնատիրոջ ապօրինի գործողության մասին արձանագրություն և կազմում տեղական իշխանության ներկայացուցչի կամ յերկու վկաների ներկայությամբ, արձանագրությունն ուղարկում շրջանային գործադիր կոմիտեին, մեղավորին որինական պատասխանատվության յենթարկելու, հիվանդության մասին դիտավորյալ կերպով անձիշտ տեղեկություն տալու համար:

23. Յեթի տեղական իշխանության (շրջգործկոմ և այլն) պաշտոնատար անձինք անասնաբուժական աշխատավորին հարկադրում են տեղերը մեկնելու այն դեպքերում, վորոնք չեն մտնում նրա պաշտոնական պարտականությունների մեջ, նրանք յենթարկում են պատասխանատվության իրեն իշխանացներ:

24. Պատահական վոչ վարակիչ հիվանդությունների բժշկությունը կատարվում և վարակիչ հիվանդությունների դիմ պայքարելու և անհետաձգելի մասսայական անասնաբուժականի համար կութիւնը կիրարկելու աշխատանքներից ազատ ժամանակ:

25. Պետական, կոռոպերատիվ, հասարակական և տնտեսավարական այլ կազմակերպությունների սպասարկումը բացի գուղատնտեսության սոցիալիստական հատվածի կազմակերպություններից, վորը տեղերը մեկնելու հետ և կապված, պարտադիր չե, բացի այս կանոնադրության 20-րդ հոդվածում մատնանըշշված դեպքերից և կարող ե իրագործվել գավառական հողագին բաժնի թույլավությամբ՝ արհմիության հետ փոխադադար համաձայնությամբ:

26. Կենդանիներին դիտավորյալ կերպով ֆյասելու կամ թունավորելու դեպքում շրջանի անասնաբուժական պերսոնալը կորող և փորձաքննություն կատարել միայն համապատասխան դատական կամ միլիցիական մարմիններից պաշտոնական գրություն ստացվելու դեպքում, բայց վոչ՝ շահագրգուված անասնատիրոջ խնդիրքով և անկախ այն հանգամանքից՝ տերը մասնավոր անձ և, թէ հիմնարկություն:

Փորձաքննության վարձարությունը, իսկ այն դեպքում, յերբ այն կապված ե յեղել անասնաբուժական պերսոնալի մշտական պաշտոնավայրից մեկնելու հետ, նաև ճանապարհածախքը (յերթեեկության արժեքը, որապահիկները) որենքով սահմանված չափով անասնաբուժական պերսոնալը պետք ե ստանամիայն այն մարմիններից, վորոնք հանձնարարել են փորձաքննություն կատարել:

27. Գյուղատնտեսական կենդանիների ամորձատումը (կասարացիա) պարտադիր և բուժարանում կամ հիվանդանոցում ծառայության որերին, հատուկ անասնաբուժական սարքավորում և լինվ հաստիք լինդ գեղքում, նորմալ աշխատանքի որվա սահմաններում, բուժական տնասնաբուժա-սանիտարական և համաճարակային աշխատանքներից ազատ ժամանակ:

Անասնաբուժը բնակչությանը հարմարություն տալու և աշխատանքը պլանայնորեն կատարելու համար գավառային հողային բաժնի համաձայնությամբ կարող և նշանակել ամորձատման հատուկ որեր և ժամեր, զրա մասին իրազեկ դարձնելով բնակչությանը:

Դ. Գյուղատնտեսության սոցիալիստական հատվածի սպասարկումը

28. Շրջանային անասնաբուժական պերսոնալը գյուղատնտեսության սոցիալիստական հատվածը (խորհրդային տնտեսություններ, ազնվացեղ անասունների պետական հիմնարկություններ, կոլեկտիվ և կոոպարատիվ տնտեսություններ) կենդանիներին բուժական ոգնություն ցույց տալու, վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու, անասնաբուժական պարագաների պահպանը, առողջապահական ձեռնարկումներ կիրառելու ասպարիզում սպասարկում և առաջին հերթին, յեթե գյուղատնտեսության սոցիալիստական հատվածի կազմակերպությունները չունեն իրենց հատուկ անասնաբուժական պերսոնալը:

ԾԱՆՈԹ.—Գյուղատնտեսության սոցիալիստական հատվածի սպասարկման հետ

կապված բոլոր ծախքերը (գեղորակք, վիրակապության միջոցները, շրջանային անասնաբուժական պերսոնալի վարձատրություն ըստ պայմանի և այլն), բացի համաճարակների գեմ պալքարելու ծախքերից, կատարվում են գյուղատնտեսության սոցիալիստական հատվածի կազմակերպությունների միջոցներով:


29. Գյուղատնտեսության սոցիալիստական հատվածի կազմակերպություններում իրենց հատուկ անասնաբուժական պերսոնալ լինելու գեղքում շրջանային անասնաբուժին վերապահվում և հիշյալ կազմակերպությունների անասնաբուժական սպասարկման ընդհանուր դեկավարությունը և վերահսկողությունը:

Իր գործառնական աշխատանքներում գյուղատնտեսության սոցիալիստական հատվածի անասնաբուժական պերսոնալը բոլորովին անկախ և շրջանային անասնաբուժից:

ԾԱՆՈԹ.—Գյուղատնտեսության սոցիալիստական հատվածի անասնաբուժական պերսոնալն Անասնաբուժական Վարչության գծով իր հատուկ հաշվետվությունը ներկայացնում և շրջանային անասնաբուժի միջոցով:

Ե. Անասնաբուժական կուլտ-կրթական աշխատանք յեվ մասնակցություն հաստարակական կազմակերպություններում

30. Շրջանային անասնաբուժական մեջ անասնաբուժական կուլտ-կրթական աշխատանք և կատարում համաձայն շնորհված մար-



մինների: քաղլուսվարի հետ, նրանց աշխատանքների պլանի հետ համաձայնեցված պլանով և Հողժողկոմատի հրահանգների համեմատ:

31. Շրջանային անասնաբուժը զարկ ե տալիս շրջանի բնակչության ինքնազործունեությանը՝ անասնաբուժա-սանիստ սրական ձեռնարկումների ասպարիզում և իր ամբողջ աշխատանքը համաձայնեցնում ե տեղական հասարակական և խորհրդային կադմակերպությունների հետ և հենվում ե նրանց վրա:

Զ. Մասնակցություն զուտելենիկական հետարկութերին

32. Շրջանային անասնաբուժը պարտավոր ե մերձավոր մասնակցություն ունենալու բոլոր զուտելիքների կամ ձեռնարկումներին, փորպես զոոտեխնիքական հանձնաժողովի անդամ և իրեն փորձագետ, իր իրավասության յենթակա բոլոր հարցերում: Նա մասնակցում է ցուցահանդեսներին, կենդանիների համար մրցանակ տալուն, ազնվացեղ և հանձնարարված (օճար) արտադրողներ ընտրելուն ու ձեռքբերելուն, կենդանաբուժության ուղղության վերաբերյալ հարցերը վորոշելուն, կենդանիների վորակային վերահաշվառմանը և արհեստական բեղմանվորման ու զուգավորման կամպանիաներին և այլն: Կենդանիներին իրենց առողջական գրության տեսակետից այս կամ այն նպատակի համար պիտանի համարելու հարցում շրջանային անասնաբուժի յեղբակացությունը վճռական նշանակություն ունի:

33. Շրջանային անասնաբուժը մասնակցում է գինվորական գերատեսչության կողմից կատարվող ձիերի հաշվառմանը:

Ը. Մասնակցություն կենդանիների ապահովագրության գործում

34. Շրջանային անասնաբուժը կարող է մասնակցել կենդանիների պետական ապահովագրությանը: Այդ մասնակցության չափն ու ձեռք վորոշվում ե Պետապի տեղական մարմինների և համապատասխան անասնաբուժական յենթաբաժինների համաձայնությամբ, բացի 36, 37 և 38 հոդվածներում հիշատակված պարտականություններից, վորոնք պարտադիր են շրջանային անասնաբուժի և Պետապի համար:

ԾԱՆՈԹ.—Պետական ապահովագրության գործողություններին անասնաբուժական մասնակցում են գավառային անասնաբուժական յենթաբաժնի Պետապի գավառային գործակալության փոխադարձ համաձայնությամբ՝ յուրաքանչյուր առանձին անձի վերաբերմամբ:

35. Պետապի մարմինների հրավերով անասնաբուժական պերսոնալը տեղերը մեկնում ե Պետապի մարմինների հաշվով, փոխադարձ համաձայնությամբ:

36. Շրջանային անասնաբուժն իր բնակավայրում և կամ պաշտօնական շրջագայության ժամանակ, սատկած անասունների դիակները քննելիս կազմում ե լուծարման արձանագրություններ ապահովագրված կենդանիների սատկելու մասին:

37. Շրջանային անասնաբուժը յեղբակացություն ե տալիս՝

ա) ապահովագրված կենդանիների սատկելու պատճառների մասին՝ նրան ուղարկված լուծարման բոլոր արձանագրությունների վրա.

ԾԱՆՈԹ. — 1. Յեթև արձանագրության մեջ յեղած տվյալների հիման վրա չի կարելի կենդանիների անկան պատճառը ճիշտ վորոշել, այդ դեպքում անասնաբուժն եր յեզրակացության մեջ կարող ե կասկած հայտնել այն հիվանդության մասին, վորը կենդանու սատկելու պատճառ ե յեղել, կամ ցուց տալ, վոր արձանագրության տվյալների հիման վրա կենդանու սատկելու պատճառների մասին յեզրակացություն տալը հնարավոր չե:

ԾԱՆՈԹ. — 2. Շրջանային անասնաբուժը ճշտորեն ցուցակագրում ե իր ստացած լուծարման բոլոր արձանագրությունները և նրանց փերաբերմամբ իր տված յեզրակացությունները:

բ) Անբուժելի հիվանդությունից տառապող կամ արտադրողականությունը կորցրած ապահովագրված կենդանուն սպանելու անհրաժեշտառթյան և սպանելուց հետո անառնանյութն ոգտագործելու հնարավորության մասին.

գ) Պետապի գործակալների և զրասենյակների հաբցումների առթիվ՝ յերևան լեկած և սատակումների ավելացման առիթ ծառայող մասսայական հիվանդությունների բնույթի մասին.

դ) Կենդանիների առահովագրությունը դադարեցնելու մասին այն տնտեսություններում, վայրերում և շրջաններում, վորտեղ վարակիչ հիվանդություն ե յերեւալ:

33. Պետական առահովագրության գծով իր կա-

տարած աշխատանքի համար շրջանային անասնաբուժն ստանում ե վարձատրություն, վորի չափը սահմանում ե Պետապի վարչությունը Հողագործության ֆողովրդական Կոմիսարիատի Անասնաբուժական Վարչության հատուկ համաձայնությամբ:

Թ. Անասնաբուժական հայրայրում

39. Անասնաբուժի տնորինության տակ գտնը վում ե դեղատուն, կենդանիների ամբուլատորիական ընդունելության և մնալուն բուժման համար անհրաժեշտ վիրաբուժական գործիքներով ու դեղորայքի տեսակներով, վորոնց թվում նաև խիստ ներգործող և քնարեր (նարկոտիկ) միջոցներ:

40. Շրջանային անասնաբուժը դեղատոմսեր ե գրում և հսկում ե, վորպեսզի կենդանիների բժշկության համար դեղերը արվեն անասնատերերի ձեռքը, ինչպես նաև պահվեն դեղատան մեջ, համաձայն Ռուսական ֆարմակոպեյակի (Դ-րդ հրատարակություն) և այս մասին գորություն ունեցող այլ որենսողությունների ու հրահանգների:

41. Անասնաբուժն իրավունք ունի պահանջագրով և դեղատոմսերով բոլոր առեարական դեղատնային պահեստներից և արտահիվանդանոցային դեղատներից պահանջելու ու ստանալու առանց բացառության ամեն տեսակի դեղեր՝ Ռուսական ֆարմակոպեյայով և համապատասխան որենսողություններով սահմանված պայմաններով ու նորմաներով:

Փ. Անասնաբուժական սահմանադրություն

42. Շրջանային անասնաբուժը հողային շրաժնի անասնաբուժական յենթաքածնին իր գործունեւ-

թիւն բոլոր տեսակների մասին հաշվետվություն և ներկայացնում Հողագործության ժողովրդական կոմիսարիատի Անասնաբուժական Վարչության կողմից սահմանված ձևերով և ժամկետներին:

43. Շըջանում պետք ե պահեն մտից և յելից գրությունների մատյաններ, գուցքային մատյան, հիվանդ կենդանիների ընդունման և տրված դեղատոմսիրի մատյան՝ Հողագործության ժողովրդական կոմիսարիատի Անասնաբուժական Վարչության սահմանած ձևերով, դրամական գումարների յելքի ու մուտքի դրամական մատյան, անասնաբուժական հայթաթման մատյան, տեղերը մեկնելու որագիր՝ պատճառների մատնանշումով:

Շըջանում ստացվող գեղորայքը և նրա ծախսումը ճշտորեն արձանագրվում և հաշվետվության մեջ, Ռուսական ֆորմակոպեյայի (7-րդ հրատ.) պահանջների հիման վրա:

44. Պաշտոնն ուրիշին հանձնելիս անասնաբուժը պետք ե հանձնի շըջանի բոլոր փաստաթղթերն ու գործերը, պաշտոնական կնիքը և շտամպը, դրամական գումարները և ինվենտարը, Հանձնելու մասին կազմվում ե արձանագրություն, վորն ուղարկվում է գավառային հողային բաժնի անասնաբուժական յենթաբաժնին, իսկ պատճենները թողնվում են շըջանի գործերի մեջ և հանձնողի մոտ:

45. Անասնաբուժի հիվանդության կամ բացակայության գեպքում անասնաբուժական շըջանի կառուվարչությունը զավառային հողային բաժնի անասնաբուժական յենթաբաժնի կողմից դրվում է հարեան շըջանի անասնաբուժի կամ անասնաբուժակի վրա:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿ

46. Շրջանային անասնաբուժակը նշանակվում, արձակվում և տեղափոխվում ե գավառային հողացին բաժնի կողմից գավառական անասնաբուժական յենթաբաժնի առաջարկությամբ, Անասնաբուժական կանոնագրքի 78—80 հոդվածների հիման վրա, վորի մասին հայտնվում է Հողագործության ժողովրդական կոմիսարիատի Անասնաբուժական Վարչությանը:

ԾԱՆՈԹ.—Անասնաբուժակների տեղափոխությունը կատարվում է այս կանոնադրության 9-րդ հոդվածի ծանոթության հիման վրա:

47. Շրջանային անասնաբուժակը հանդիսանում է շրջանային անասնաբուժի մերձակոր ոգնականը և կատարում և նրա բոլոր որինական պաշտոնական հանձնաբարությունները մասնագիտական և վարչատնտեսական աշխատանքների ասպարիզում, համաձայն ներքին կարգի կանոնների:

48. Անասնաբուժի ժամանակավոր բացակայության գեպքում անասնաբուժակը հանդիսանում ե նրա տեղակալը և իր պարտականությունը կատարում է անասնաբուժական պերսոնալի պրոֆեսիոնալ իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ կանոնադրությամբ նախատեսված սահմաններում:

49. Խնդնուրուցն անասնաբուժակային շըջանի վարիչ լինելու իրավունք ունեն՝

ա) նրանք, վորոնք ավարտել են քաղաքացիական նորմալ անասնաբուժակային գպրոցները և յեռամյա ծրագրով անասնաբուժական ուիխնիկումները, զինվորական-անասնաբուժա-

կային դպրոցը և նրանց կից 10-ամսյա զինվորական անսամբլութակային կրկնողական դասընթացքները և կամ տեսական ու գործնական քննությունները և կամ տվել վերոհիշյալ ուսումնական հիմարկություններում նրանց ծրագրով և հիշյալ դպրոցներն ու դասընթացքներն ավարտելուց հետո առնվազն յերեք տարի աշխատել են ըջանում:

բ) այն անասնաբուժակները, վորոնք ավարտել են նախկին զինվորական անսամբլութակային դպրոցները 1907 թ. ծրագրով և կամ քննություններում տվել այդ դպրոցներում կամ նախկին նահանգական անասնաբուժական վարչություններում և աշխատել են շրջաններում, անասնաբուժների զեկավարության տակ, առնըղվազն վեց տարի և բավարար գիտելիքներ ու փորձառություն են ցուց տվել աշխատանքի մեջ:

50. Ինքնուրուցն անասնաբուժական կայանի վարիչ անասնաբուժակն իր պարտականությունները կատարում և համապատասխան շրջանային անասնաբուժի ընդհանուր զեկավարության ու հսկողություն տակ: Նրա պարտականություններն են՝

ա) բշտկել ընտանի կենդանիների և թըռչունների վոչ-վարակիչ և պարագիտար հիվանդությունները, մանր վիրտութական գործողություններ կատարել ծննդաբերական ողնությունների հասցնել և վարակիչ հիվանդությունների տարածման առաջն առնելու համար միջոցներ:

բ) Ռուսական ֆարմակոպեյայի վերջին հրատարակության ցուցումներով և Հոգագործության ժողովրդական Կոմիսարիատի կողմէց հաստատված ցուցակի համաձայն, դեղատոմներով դեղորայք, քնաբեր (նարկոտիկ) և խիստ ներգործող միջոցներ գուրս գրել:

գ) վկայականներ տալ կենդանիների տարիքի, տեսակի, առողջական դրության, կազմվածքի, արտաքինի, հզության, շահագործման համար պիտանիության, հիվանդության և մահվան մասին.

դ) անասնաբուժա-սանիտարական հսկողությունն ունենալ փոքր սպանդանոցների, սպանդավայրերի և մսի հրապարակների վրա (համապատասխան պատրաստությունն ունենալու դեպքում):

ե) տվյալ վայրը վարակիչ հիվանդություններից զերծ լինելու մասին վկայականներ տալ կենդանիներ և հում անասնաբուժերքներ տեղափոխելու համար մինչեւ այն ամենամոտիկ կույանը, վորն սպասարկվում և անասնաբուժի կողմից:

զ) կուլո-կրթական աշխատանք կատարել.

ը) անհապաղ տեղեկություն տալ շրջանային անասնաբուժին կենդանիների վարակիչ կամ կասկածելի հիվանդություններ յերեալու մասին.

թ) իր բոլոր աշխատանքների մասին շըրջանային անասնաբուժին տեղեկություն և հաշվետվություն տալ:

51. 49-րդ հոդվածի «ա» կետում մատնանշ լած

վորակավորում ունեցող և շրջանում անասնաբուժի գեկավարության տակ առնվազն վեց տարի պաշտոնավարած և աշխատանքի բավարար հմտություն ու փորձառություն ցուցաբերած անասնաբուժակներին Հողագործության ժողովրդական Կոմիսարիատի Անասնաբուժական Վարչության գիտությամբ կարող և իրավունք տրվել վարելու ժամանակավորապես շըրջանի վարչի պաշտոնը:

52. Անասնաբուժական շրջանում ժամանակավորապես անասնաբուժի պարտականություններ կատարող անասնաբուժակն իր պարտականությունները կատարում և գալառություն անասնաբուժի և կամ նրա կարգադրությամբ՝ մոտակա շրջանային անասնաբուժի ընդհանուր ղեկավարության տակ. նրա պարտականություններն են՝

ա) 50-րդ հոդվածում մատնանշվածերը.

բ) կենդանիների և թռչունների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու ձեռնարկությունների կիրարկումը գալառություն անասնաբուժի կամ նրա կարգադրությամբ՝ մոտակա շրջանային անասնաբուժի հսկողության տակ:

53. Շրջանում ժամանակավորապես անասնաբուժին փոխարինելու համար նշանակված անասնաբուժակները աշխատավարձ ստանում են վարչության հետ փոխադարձ համաձայնությամբ, սակայն տվյալ գալառի շրջանային անասնաբուժների նվազագույն ժամանակի կուպարից վոչ պակաս:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺՄԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐ

54. Անասնաբուժական սանիտարը նշանակվում և արձակվում երջանային գործադիր կոմիտեյի կողմից, անասնաբուժական շրջանի վարչիցի առաջարկությամբ, համաձայն գործող աշխատանքալին որենսդրության և հավաքական պայմանագրի, վորմասին հայտնվում է գալառային հողավին բաժնի անասնաբուժական յենթաբաժնին:

55. Անասնաբուժական սանիտարի աշխատանքը կանոնավորվում է ներքին կարգի կանոնների համաձայն:

Հողագործության ժողովրդական Կոմիտե՝
սար՝ Ա. Յերզեկյան

Ներքին Գործ. Ժողովրդական Կոմիտե՝
սար՝ Ա. Հարուբյունյան

Արդարադատության ժողովրդ. Կոմիտե՝
սար՝ Ա. Հովսեփյան

Առողջապահության ժողովրդ. Կոմիտե՝
սար՝ Ա. Գարգառյան

Անասնաբուժական Վարչության
Պետ՝ Վ. Թորոսյան

ПОЛОЖЕНИЕ о ветеринарном участке

(Издается на основании ч. IV Ветеринарного Устава)

I. Общие принципы, итоги и задачи

1. В целях проведения мероприятий для борьбы с эпизоотиями, ветеринарно-санитарного надзора за данной местностью и для обеспечения населения всеми видами ветеринарной помощи, учреждается ветеринарно-участковая организация — ветеринарный участок.

